ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎՈՂ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Կարինեն (անունը փոխված է) անցյալ տարի առանց թույլտվության մուտք է գործել համագյուղացու բակ և 3կգ սմբուկ է հավաքել: Երբ տան տերը նկատել է աղջկան, վերջինս չի հասցրել հավաքած սմբուկը տանել և գցել է գետնին: Համագյուղացին այդ ժամանակ 17-ամյա Կարինեի դեմ բողոք է ներկայացրել ոստիկանություն: Գողություն կատարելու փաստով ոստիկանության Կապանի բաժնում նյութեր են նախապատրաստվել: Քրեական գործ չի հարուցվել, սակայն ոստիկանության բաժնում Կարինեին վերցրել են հաշվառման[1]: Ոստիկանները Կարինեին ուղղորդել էին Կապանի մանկական կենտրոն, որտեղ անչափահաս աղջիկը մասնագետների օգնությամբ մոտ մեկ տարի փորձում էր մոռանալ իր հետ կատարվածը և հոգեբանական ցնցումներից հետո վերադառնալ հասարակություն: Այժմ արդեն չափահաս Կարինեն ամոթով է հիշում կատարվածը:

Գուցե 3 կգ սմբուկի գողության փորձը շատերի մոտ զվարճալի պատմություն է հիշեցնում, իսկ աղջկա համագյուղացու արարքը՝ պարսավելի քայլ, սակայն՝ անչափահասների կողմից վարքային շեղումները հենց նման դեպքերով են խորանում: «Ձու գողացողը ձի էլ կգողանա» ժողովրդական ասացվածքը հենց նման դեպքերի համար է ասված:

Անչափահասներին հատուկ է այլ անձանց ազդեցության տակ ընկնելու, արկածախնդրության հետևից գնալու, երբեմն ոչ ճիշտ վարքագիծ դրսևորելու երևույթները, սակայն, դրանք չկանխարգելելու և նրանց հետ բացատրական աշխատանք չկատարելու դեպքում կարող է այն ավելի խորանալ և էականորեն փոխել ոչ միայն անչափահասի աշխարընկալումը այլև ապրելակերպը և հետագա ճակատագիրը:

Հատկապես ընտանիքը կարևոր գործոն է անչափահասների պարագայում: Վերջիններիս վարքային շեղումներն ուսումնասիրելու համար անհրաժեշտ է հաշվի առնել ընտանիքի կազմը, ծնողների զբաղվածությունը, նրանց վարքագիծը, ընտանիքի կենսամակարդակը: Գաղտնիք չէ, որ ծնողների կողմից երեխայի նկատմաբ ոչ պատշաճ ուշադրությունը կարող է նպաստել երեխայի կողմից հանցագործություն, ինչու չէ նաև կրկնահանցագործություն կատարելու ռիսկի ավելացմանը: Ընտանիքի սոցիալական պայմանները ևս բացասական ազդեցություն կարող են ունենալ անչափահասի վարքի վրա:

Իզուր չէ, որ «Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ» ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները կամ

[1] http://hetq.am/arm/news/54655/3-kg-smbuki-goxutyan-pordz-axjiky-iravakhakhti-hambav-e-dzerq-berel-ev-hashvarvel-ostikanutyunum.html

որ նույնն է՝ «Պեկինյան կանոնները» արձանագրում են՝ սոցիալական ուսումնասիրությունների արդյունքների մասին զեկույցները մեծ մասամբ անփոխարինելի օգնություն են անչափահասների գործերի դատաքննության ժամանակ:

«Հեղինակավոր մարմինները պետք է իմանան անչափահասներին վերաբերող համապատասխան փաստերի մասին, օրինակ, անչափահասի սոցիալական և ընտանեկան շրջապատի, դպրոցում՝ նրա ուսման, դաստիարակության մասին և այլն: Այդ նպատակով մի քանի դատական համակարգերում օգտագործում են հատուկ սոցիալական ծառայություններ կամ դատարանների, հանձնաժողովների համար այդ պարտականությունները կատարող աշխատակիցներ: Այդ պարտականությունները կարող են կատարվել այլ աշխատակիցների՝ այդ թվում պրոբացիոն (հետազոտական) համակարգի պաշտոնական անձանց կողմից»[2]:

«Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ-ն այս տարի իրականացրել է «Հայաստանում հանցավորությանը և կրկնահանցագործությանը նպաստող գործոնների որակական և քանակական հետազոտություն»[3]: Փորձագետները նշել են, որ անչափահասների միջավայրը և շրջապատն առավել ազդեցիկ գործոն են: Ըստ նրանց՝ անչափահասները չեն կարողանում դիմադրել հասակակիցների բացասական ազդեցությանը, քանի որ հակադիր դիրքորոշումը կարող է ընկալվել որպես թուլության նշան: Արդյունքում նրանք միանում են հանցավոր վարք և գործողություններ կատարող հասակակիցներին:

Անդրադառնալով հանցագործությունների թվին՝ նշենք, որ այս տարվա առաջին կիսամյակում, 14-16 տարիքային խմբում, մի խումբ անձանց մասնակցությամբ գողություն կատարելու համար Հայաստանում դատապարտվել է 2 անչափահաս:

Անչափահաս դատապարտվածների թվաքանակն ըստ տարիքային խմբերի, 2008-2013թթ

		2008	***2009***	***2010***	***2011***	***2012***	***2013***
Դատապարտվածների թվաքանակը	ընդամենը	178	166	176	110	87	83
	Նրանցից՝ աղջիկներ	5	9	4	2	2	1
Ըստ տարիքային խմբերի՝							
14-15		28	42	46	32	26	12
16-17		150	124	130	78	61	71

Յուրաքանչյուր թվի հետևում մեկ կյանք է, մեկ ճակատագիր: Նույն թվերը փաստում են, որ անչափահասների կողմից կատարվող կամ նրանց մասնակցությամբ հանցագործությունները նվազման միտում ունեն:

[2] http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=18505

[3] http://www.coe.am/docs/pubs/qq-arm.pdf

Ըստ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2011թ. գրանցվել է անչափահասների կողմից կամ մասնակցությամբ 527 հանցագործության դեպք, որից 176-ը՝ Երևանում, 2012թ. դրանց թիվը կազմել է 414, որից 202-ը Երևանում[4]:

Միայն 2012թ. 1.394 գողության դեպքերից 136-ը բաժին է ընկել անչափահասներին, որոնցից թվով 8-ը եղել են աղջիկներ:

Ոստիկանության տվյալներով 2013թ-ին գրանցվել է անչափահասների մասնակցությամբ 418 հանցագործության դեպք: Այս տարվա 9 ամիսների տվյալներով՝ գրանցվել է 279 հանցագործություն, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ պակաս է 19 դեպքով, իսկ 16 դեպքով պակասել է անչափահասների մասնակցությամբ խմբերում կատարված հանցագործությունների թիվը: 2014թ. 9 ամիսների ընթացքում Հայաստանում գրանցվել է մարդկանց թրաֆիքինգի կանանց պոռնկության շահագործման 7 դեպք, որոնցից 1-ը՝ անչափահասի[5]:

Համեմատության համար նշենք, որ այս տարվա 8 ամիսների ընթացքում գրանցվել է անչափահասների կողմից կատարված հանցագործության 243 դեպք, որոնցից 115-ը՝ մայրաքաղաքում: Հանցագործություն կատարած անչափահասների թիվը եղել է 160, անցած տարվա համեմատ 20-ով պակաս:

Անչափահասների «նախընտրած» հանցատեսակը, ինչպես միշտ, եղել է գողությունը՝ 116 դեպք, անցյալ տարվա համեմատ 15-ով պակաս: Գրանցվել է նաև մարմնական վնասվածք հասցնելու՝ 28, ավազակային հարձակման՝ 2, անօրինական զենք կրելու՝ 7, թմրանյութ պատրաստելու, իրացնելու՝ 3, ավտոմեքենա փախցնելու 4 և այլ դեպքեր:

Հանցագործությունների մեջ ներքաշվելու հիմնական թիրախային խումբը 15-17 տարեկաններն են: Ինչպես նշում են մասնագետները՝ անչափահասների կողմից հանցագործություն կատարելու հիմնական դրդապատճառն անբավարար զբաղվածությունն է և ծնողների անուշադրությունը:

Անչափահաս դատապարտվածների քանակն ըստ հանցագործությունների. 2008-2013թթ[6].

	2008	***2009***	***2010***	***2011***	***2012***	***2013***
Գույքի հափշտակում	126	112	131	83	64	46
Այդ թվում՝						
գողություն	111	94	113	71	55	42
կողոպուտ	8	16	10	7	2	0
ավազակություն	3	1	8	5	7	3

[4] http://www.armstat.am/file/article/soc_12_53-54.pdf

[5] http://www.police.am/news/view/ampop131014.html

[6] http://www.armstat.am/file/article/soc_13_56-57.pdf

խարդախություն	4	1	0	0	0	1
Սպանություն	2	0	2	1	0	1
Դիտավորյալ ծանր մարմնական վնասվածք	25	0	15	8	9	13
Խուլիգանություն	2	16	8	7	2	4
Թմրամիջոցների հետ կապված հանցագործություններ	5	2	3	3	2	5
Այլ հանցագործություններ	18	36	17	8	10	14
Ընդամենը	***178***	***166***	***176***	***110***	***87***	***83***

Անչափահասների շրջանում հանցագործությունների նվազման գործում մեծ դերակատարություն ունեն ոստիկանությունն ու վերականգնողական կենտրոնները, որոնք համատեղ ջանքեր են ձեռնարկում այդ ուղղությամբ:

Գրիշա Բալասանյան
ՀՀ փաստաբանների պալատի
երիտասարդական խորհուրդ